ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱԶ
ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013 թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ հանրային լսում, որին մասնակցում էին Դիտակ համայնքի բնակիչներ, մանկավարժներ և ավագանու անդամներ:
Հանրային լսման ժամանակ ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Սուրեն Սրապոյանը,ով հանգամա նորեն ներկայացրեց համայնքում իրականացրած աշխատանքների և մինչև դեկտեմբերի վերջը իրականաց վող աշխատանքների մասին:Համայնքի կարիքավոր ընտանիքներին հատկացվել է անհատույց դրամական օգնություն: Համայնքում յուրաքանչյուր մահացածի ընտանիքին հատկացվել է անհատույց 100000 –ական դրամ:
Տաք սնունդ ծրագրի շրջանակներում դպրոցին օգնություն է հատկացվել սպասքի և սնունդի տեսքով:
Համայնքի ղեկավարը դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին հատկացրել է գրենական պիտույքներ:
Տարեմուտին նախատեսվում է համայնքի թվով 150 երեխաներին ամանորյա նվերներ: Իսկ համայնքի բոլոր ընտանիքներին նոր տարվա կապակցությամբ տրվելու է տոնական նվերներ:
2013 թվականի 2-րդ կիսամյակի բյուջեի ցուցանիշներն են՝

1. Հարկային եկամուտների պլան կատարողական

	պլան	կատարողական	
Հողի հարկ –	2166.0 հազ. դրամ -	2166.0 հազ. դրամ -	100 %
Գույքահարկ-	930.0 հազ. դրամ-	930.0 հազ. դրամ-	100 %
Տեղական տուրքեր-	72.0 հազ. դրամ-	84.0 հազ. դրամ-	116.6 %

2. Ոչ հարկային եկամուտներ

Հողի վարձավճար-	300.0 հազ. դրամ-	300.0 հազ. դրամ-	100 %
Դոտացիա-	9513.0 հազ. դրամ-	8720.0 հազ. դրամ-	92%
Ընդամենը	12981.0 հազ. դրամ-	12200.0 հազ. դրամ-	94%

Համայնքի ղեկավարը կատարված աշխատանքների կողքին նշեց նաև մի շարք հիմնախնդիրներ, որոնք ընդգրկված են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հաջորդ տարիների ծրագրերում՝ մշակույթի դահլիճի վերանորոգում, փողոցների լուսավորությունը, մանկապարտեզի շենքի վերանորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՊԱՀ՝ Ս.ՍՐԱՊՈՅԱՆ